ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ г. АЛАВЕРДИ
REPUBLIC OF ARMENIA REGION OF LORI
MUNICIPALITY OF ALAVERDI

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկ 8/1
1702, Алаверди, З. Андраник 8/1
1702, Alaverdi, Z. Andranik 8/1
☎ (253) 2-41-00
E-mail: alaverdi.lori@mta.gov.am
URL: www.alaverdi.am

№ 871
«28» 07. 2016թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2016թ. N 215-Ա - N 218-Ա որոշումները:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.Ս. ՓԱՐԵՄՈՒՋՅԱՆ

Կատ.՝ Ա. Էվոյան
2-41-02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հուլիսի 2016 թվականի N 218-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 64-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով Սահակ Ժորայի Երիցյանի դիմումը, Ալավերդու քաղ. խորհրդի գործադիր կոմիտեի 12.01.1993թ. N 20/9 որոշման քաղվածքը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վալերի Մինասյանի առաջարկությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Ալավերդի քաղաքի Սանահին թաղամաս 4-րդ փողոց N 15 հասցեում գտնվող, Սահակ Ժորայի Երիցյանին պատկանող 1054.6 քմ մակերեսով հողամասի հողահատկացման հիմքերն ու հողօգտագործման իրավունքը:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Նշված հողամասն ընդգրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում:
4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Կ.Ս. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2016թ. հուլիսի 27

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հուլիսի 2016 թվականի N 217-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վալերի Մինասյանի առաջարկությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ալավերդի քաղաքի Թումանյան փողոց N 83/1 հասցեում գտնվող խանութ-սրահին (ծածկագիր՝ 06-002-0163-0008) սահմանակից՝ 47.2 քմ մակերեսով հողամասին տրամադրել Թումանյան փողոց N 83/2 փոստային հասցե:

Կ.Ս. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2016թ. հուլիսի 27

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հուլիսի 2016 թվականի N 216-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թ. հուլիսի 25-ի «Ալավերդի համայնքի 2016 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 40-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ալավերդի համայնքի 2016 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակների փոփոխված բաշխումները /հավելված 1,2/:
2. Հաստատել Ալավերդի համայնքի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների /հավելված 1,4/:

Կ.Ս. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2016թ. հուլիսի 26
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հուլիսի 2016 թվականի N 215-Ա

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ 3/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 16.05.2016թ. N 23-Ն, Ալավերդի համայնքի ղեկավարի 24.05.2016թ. N 111-Ա որոշումները, համայնքային սեփականության իրավունքի N 03052016-06-0068 վկայականը, աճուրդային հանձնաժողովի 25.07.2016թ. N 7 արձանագրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա փողոց 3/5 հասցեում գտնվող (ծածկագիր 06-002-0027-0039-002) հասարակական նշանակության 22.0 քմ մակերեսով տարածքը 1386000 (մեկ միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար) դրամ արժեքով (այդ թվում շինությունը՝ 1378933.5 դրամ և հողամասը՝ 7066.5 դրամ)՝ վաճառել աճուրդի հաղթող Գյուլնարա Սարգսի Պետրոսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

Կ.Ս. ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ

2016թ. հուլիսի 26
ք. Ալավերդի